ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԱՅՐՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՇԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОЖОГОВ И ДЕРМАТОЛОГИИ» МЗ РА
«NATIONAL CENTER FOR BURNS AND DERMATOLOGY» OF MOH OF RA CJSC

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴԵԼՏԱ ԼԼ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԱՆ «Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 2025 թվականի կարիքների համար անվտանգության ապահովման ծառայությունների ձեռքբերման նպատակով 16.01.2025 թվականին հայտարարված թիվ «ԱՄԱԿ-ԷԱՃԾՁԲ-25/14» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԴԵԼՏԱ ԼԼ» ՍՊԸ-ը (այսուհետ՝ նաև Ընկերություն): Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է gnumner.am կայքում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակը: «Մեգա Օլիմպ» ՍՊԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, վերջինս փոխկապակցված է «Դելտա ԼԼ» ՍՊԸ-ն հետ: «Մեգա Օլիմպ» ՍՊԸ-ն ներառվել է ցուցակում 06.10.2023թ.-ից մինչև 06.10.2025թ.-ը ներառյալ: «Դելտա ԼԼ» ՍՊԸ-ն տնօրենը, որը նաև ընկերության 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր է, հանդիսանում է նաև «Մեգա Օլիմպ» ՍՊԸ-ն տնօրեն: Գնահատող հանձնաժողովի 31.01.2025 թվականի արտահերթ նիստի թիվ 2 որոշմամբ «Դելտա ԼԼ» ՍՊԸ-ն հայտը գնահատվել է անբավարար և մերժվել հետևյալ պատճառաբանությամբ.

«Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե գործել են

25a Davtashen, Yerevan 0054 - Երեւան 0054, Դավթաշեն 25ա - 0054, г.Ереван, Давташен 25а
հեռ. (+37410)-342710 dermasticos@gmail.com

համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ:

Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում:

«Գնմուների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձիք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ:

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Համադրելով վերոնշյալ ներկայացված փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ արձանագրում ենք, որ «ԱՄԱԿ-ԷԱՃԾՁԲ-25/14» ծածկագրով մրցույթի շրջանակներում Ընկերության հայտով ներկայացված հավաստումն առ այն, որ «ԴԵԼՏԱ ԼԼ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձիք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության գործադիր տնօրենը, որը նաև Ընկերության 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր է, հանդիսանում է նաև հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Մեգա Օլիմպ» ՍՊԸ-ն տնօրեն՝ փաստացի համալրելով վերջինիս հետ փոխկապակցված անձ: Նշված հանգամանքը ինքնաբերաբար հանգեցնում է Ընկերության գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում: Հետևաբար, Ընկերությունը գնման գործընթացի շրջանակներում ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն՝ խախտել իր իսկ հայտով ստանձնած պարտավորությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա է «ԴԵԼՏԱ ԼԼ» ՍՊԸ-ը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա պարբերությամբ սահմանված հիմքերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Աննա Չոբանյան
Հեռ՝. 098012566